ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 9 -ի թիվ 302 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԵՐՆՋԱՏԱՓԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետը և «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդան Ղուկասյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդան Ղուկասյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ:
2. Վարդան Ղուկասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Հեղինե Համբարձումյանին:
3. Վարդան Ղուկասյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 14-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/10/2026 11:38:16 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի 9. Աշտարակ